

3409

281

4-24


1909

1911

№. 69.

(113)

281:34
4-21
1976-40



281:34
4-21

rw

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊԱՐԾԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ.



№ 2001

1909 թ.

ՆՈՐ-ՋՈՒԴԱ. (ՍՃԱՀԱՆ)

Տպարան Ա. Ամենափրկիչ Վանաց

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. — Իրանի Վեհապետների շնորհած բազմաթիւ բարձրագոյն հրովարտականի համաձայն՝ Պարսկաստանի Հայ Ժողովուրդը ազատ է կառարելու իւր կրօնական պաշտամունքը և կառավարելու իւր եկեղեցական համայնական գործերն ըստ Հայաստանեայց Եկեղեցու կանոնների և ծէսերի, ամբողջ Պարսից Սահմանադրական Պետութեան սահմաններում:
2. — Պարսկա-Հնդկաստանի Հայոց Եկեղեցին և համայնքը՝ իրիւ հարազատ ժառանգներ Ա. Լուսաւորչի Գոհի և Մայր Աթոռի, ենթարկուած են Ն. Վ. Ամենայն Հայոց Հայրապետի Ծայրագոյն Իշխանութեան:
3. — Պարսկա-Հնդկաստանի եկեղեցական համայնական բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգևորական և թէ աշխարհական՝ իրենց վարչական գործունէութեան շրջանում ենթակալ են Թեմական Իշխանութեան իրաւասութեան:
4. — Պարսկա-Հնդկաստանի Հայոց համայնքը՝ իւր կրօնական և եկեղեցական համայնական գործերում, կախուած է միմիայն Հայաստանեայց Եկեղեցու Իշխանութիւններից, որոնք առաջնորդուած են Հայոց Եկեղեցու կանոնական իրաւունքով:
5. — Պարսկա-Հնդկաստանի բոլոր հայ հոգևորականներն ու եկեղեցական համայնական պաշտօնեաները կարող են իրենց հաւատարիմ և եռանդուն պաշտօնավարութեան համար պարգևատրուել Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսից, Պարսկա-Հնդկաստանի Թեմական Ժողովի որոշմամբ և թեմ. Առաջնորդի միջնորդութեամբ:
6. — Հայոց Եկեղեցական-համայնական, կրթական կամ բարեգործական հաստատութիւն (գրադարան, ընթերցարան, հիւանդանոց, որրանոց, ուսումնարաններ և այլն) պիտի լինին սեպհականութիւն որեւէ եկեղեցու կամ վանքի և չեն կարող անկախ և ինքնուրոյն իրաւաւորական մարմին ներկայացնել:
7. — Այդ հաստատութիւններից իւրաքանչիւրը իրեն լատկացուած գոյքից օգտուած է և կառավարուած իւր լատուկ կանոնադրութեամբ:
8. — Իւրաքանչիւր ծխական եկեղեցու կամ վանքի պատկանող, այլ և՛ որեւէ կրթական, եկեղեցական, համայնական հաստատութեան լատկացուած գոյքերը համարուած են անձեռնմխելի սեպհականութիւն Հայաստանեայց Եկեղեցու: Այս մասնակի կրթական և բարեգործական հաստատութիւնների կալուածքները և գոյքերը պէտք է հաստատել տրուին լանուն Նոր-Ջուղայի Ա. Ամենափրկչեան Վանքի: Իսկ վերալիջեալ հաստատութիւնների վաւիճան գէտքումը, նրանց գոյքը և կալուածքը ենթարկուած են Թեմական Ժողովի տնօրէնութեանը:
9. — Պարսկա-Հնդկաստանի թեմի կառավարութիւնը՝ Հայոց Եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն, հիմնուած է ընտրական սկզբունքի վրայ:
10. — Պարսկա-Հնդկաստանի թեմում ձայն և քուէ տալու, այլ և ընտրուելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին այն բոլոր թէ հոգևորական և թէ աշխարհական ազգայիներ, որոնք առ նուազն վեց տմիս

տարել են թեմի միւսումնական տեղում, վճարել են եկեղեցական համայնական պատշաճաւոր իշխանութիւնից սահմանուած՝ բոլոր եկեղեցական և թեմական տուրքերը և 21 տարեկանից պակաս չեն: Յատկապէս թեմական ժողովի և թեմական Խորհրդի անդամ ընտրութեամբ իրաւունքից օգտուում են 30 տարեկանից վեր հասակ ունեցողները:

11. — Այս ք չի կարող միաժամանակ երկու այնպիսի պաշտօն ստանձնած լինել, որոնցից մէկը ենթակալ է միւսի վերահսկողութեանը և հաշուառութեանը:

12. — Այն պաշտօնեաները, որոնք սրեւէ անձնական շահունին Ատենում խորհրդածութեան նիւթ դարձած և վճարուելիք խնդրում, կամ եթէ այդ խնդիրն իրենց է վերաբերում, նոյն այդ խնդրի մասին խորհրդածութեան և վճարահատութեան չեն կարող մասնակցել ձայնի իրաւունքով, կամ նախագահել:

13. — Բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգեւորական և թէ աշխարհական, թէ պատուաւոր և թէ վարձատրելի, վերընտրելի են:

14. — Բոլոր ժողովների, խորհուրդների և այլ բաղմանձնեայ տաճանների նիստերը համարւում են կանոնաւոր, երբ ներկայ է լինում անդամների մեծամասնութիւնը՝ ընդհանուր թուի կիսից աւելին:

15. — Բացի լատկապէս յիշուած դէպքերից, բոլոր ընտրութիւնները կատարւում են գաղտնի քուէարկութեամբ և ձայների հասարակ մեծամասնութեամբ: Ձայների հաշուար բաժանման դէպքում, գերակշռւում է այն կողմը, որին նախագահը տալիս է իր ձայնը:

16. — Թեմական հասցիների աղբիւրներն են.

ա. Թեմական եկեղեցական-համայնական տուրքեր և թղթատուրքեր.

բ. Թեմական անշարժ և շարժական գույքերի հասցիներ.

գ. Զանազան ձեռնարկութիւններից ստացուելիք եկամուտներ:

17. — Շարժական և անշարժ եկեղեցական-համայնական գույքեր գնել կարելի է մինչև 50 թումանի՝ Ծխական ժողովի որոշմամբ և գործակալութեան խորհրդի թույլտուութեամբ, իսկ լիւսուն թումանից բարձր՝ Թեմական Խորհրդի որոշմամբ:

18. — Եկեղեցական համայնական շարժական և անշարժ գույքերը ծախել կամ փոխանակել կարելի է մինչև 250 թումանի՝ Թեմական Խորհրդի որոշմամբ, մինչև 1000 թումանի՝ Թեմական ժողովի որոշմամբ, իսկ սրանից վեր՝ Թեմական և Հասարակական ժողովի որոշմամբ և Ամենայն Հայոց Աթոռակիոսի թույլտուութեամբ:

19. — Պարսկա—Հնդկաստանի թեմում սովորական սրտակների հրամանը տալիս է Գործակալ քահանան, չհասութեան կասկածելի դէպքերում թույլտուութիւն է տալիս թեմակալ Առաջնորդը, իսկ արտակարգ դէպքերում գիմելու է Ն. Վ. Ամենայն Հայոց Աթոռակիոսին:

20. — Աֆահան—Խոր-Ջուղան, սրբէս Պարսկա—Հնդկաստանի թեմի վարչական կենդրոն՝ թեմակալ Առաջնորդի թուականիստ քաղաքն է:

21. — Պատշաճաւոր իշխանութեան հրամանով և պաշտօնական գործով ճանապարհորդելիս, պաշտօնեաները կարող են ճանապարհածախք ստանալ Թեմական Խորհրդի հրահանգի համաձայն՝ կամ թեմապատկան, կամ

ծխական գումարներից և կամ ի հաշիւ գործին մասնակից մասնաւոր մարդկանցից:

22. — Այս հիմնական կանոնադրութիւնը լրացնել, փոփոխել, կամ որեւէ լաւաւ գործողութիւն կարելի է թեմական ժողովի որոշմամբ և ն. վ. Ամենայն Հայոց կաթողիկոսի թուրաւութեամբ:

Թ Ե Մ Ա Կ Ա Ն Ի Չ Խ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ա. ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

23. — Պարսկա-Հնդկաստանի թեմն ունի երկու շրջան, առաջինը՝ Նու-Ջուղան, Շիրազ, և Բուշեռ, Չարմահալ և Փերիա գաւառները, Հնդկաստան և Ջաւայի կղզիները:

Երկրորդը՝ Թէհրան, Ղազւին, Ռաշա և Էնզելին, Համահանը և Մազանդարանը, Քազազ, Քամարա, Գեաթլա, Բուրվարի և Ղարաղան գաւառները:

24. — Առաջնորդական Փոխանորդի իրաւունքներն ու պարտականութիւնները որոշում է թեմ. ժողովը՝ Առաջնորդի հաստատութեամբ:

Մանօր. — Ցանկալի է, որ Հնդկաստանի և Ջաւայի հայերն եւ ունենան մի փոխանորդութիւն կալիաթայում, թեմի կրօնական գործերը կառավարելու:

25. — Պարբերաբար՝ ամեն չորս տարին մի անգամ, Պարսկա-Հնդկաստանի թեմի երկու շրջանների հայ ժողովուրդը՝ թեմական ժողով կազմելու համար պատգամաւորներ են ընտրում չորս տարի ժամանակով: Պատգամաւորների լիազօրութեան քառամեալ ժամանակամիջոցը լրանալուց երեք ամիս առաջ, թեմական Առաջնորդը, կամ Փոխանորդը, իսկ սորա էլ բացակայութեան դէպքում, թեմական Խորհուրդների Ատենապետները շրջաբերական են ուղարկում թեմի բոլոր եկեղեցիներին և գործակալութիւններին, հրաւիրելով որ ծխական ընդհանուր ժողովներ գումարուին և պատգամաւորներ ընտրուին թեմական ժողովին մասնակցելու համար:

26. — Թեմական ժողովի պատգամաւորները ընտրւում են ընդհանուր ժողովով և գաղտնի քուէարկութեամբ:

սնօր. ա.) — Գաւառացիք կարող են պատգամաւոր ընտրել իրենց միջից կամ Նոր-Ջուղայեցիներից և Թէհրանեցիներից:

բ.) — Իւրաքանչիւր պատգամաւոր պէտք է թեմական ժողովին ներկայանայ իրեն լիազօրութիւնը հաստատող վկայականով, որը ստորագրւած պէտք է լինի գործակալութեան ժողովի նախագահից և անդամներից, և վստահեցրած գործակալական խորհրդի կէտով:

գ.) — Արեւ գործակալութեան ժողովից ընտրւած պատգամաւորի հրաժարման, տկարութեան կամ մահուան դէպքում, տեղի է ունենում պատգամաւորի մասնակի նոր ընտրութիւն յատկապէս այդ գործակալութեան համար: Այս մասնակի ընտրութեան պատճառով թեմական ժողովի նիստերը չեն յետաձգւում:

դ.) — Հին պատգամաւորների լիազօրութիւնը չարունակւում է մինչև նոր պատգամաւորների ընտրութիւնը:

ե.) — Թեմական ժողովի կազմի և սրա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների մասին՝ թեմական Առաջնորդը իւրաքանչիւր անգամ ղեկուցանում է ն. վ. Ամենայն Հայոց կաթողիկոսին:

7. — Պատգամաւորներին ժողովի հրաւիրելու իրաւունք ունին 1) թեմական Առաջնորդը, 2) պատգամաւորների կէս մասը և 3) Առաջնորդի բացակայութեան ժամանակ՝ Առաջնորդական Փոխանորդը:

28 — Երկու շրջանի Թեմական Ժողովները սովորաբար գումարում են երկու տարին մի անգամ, անցեալ երկու տարիների հաշիւները ստուգելու և միւս երկու տարիների նախահաշիւը պատրաստելու համար: Անյետաձգելի հարցեր վճռելու համար՝ հարկ եղած դէպքում, բացի այդ սովորական նիստերից, կարող են գումարուել Թեմական Ժողովի նաեւ արտակարգ նիստեր:

Ծանօթ. ա.) — Պատգամաւորների ընտրութեան համար, Թեմական Խորհուրդները նշանակում են որոշ ժամանակամիջոց, որից անմիջապէս յետոյ, Թեմ. Առաջնորդը, կամ Փոխանորդը, և կամ սրանց բացակայութեան դէպքում, Թեմական Խորհրդի Ատենապետը, պարտաւոր է պատգամաւորներին Թեմական Ժողովի հրաւիրել. ինչպէս և առհասարակ, Թեմական Ժողովի սովորական նիստերը ղումարելու դէպքում:

բ.) — Թեմակալ Առաջնորդի մահուան, հրաժարման, կամ հրաժարեցնելու դէպքում, պատգամաւորներն անմիջապէս ժողով են հրաւիրում՝ Առաջնորդ ընտրելու:

գ.) — Թեմական Ժողովները ղումարում են Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան Վանքում և Թէհրանի Ազգ. Դպրոցի շէնքում: Թեմակալ Առաջնորդը, կամ Փոխանորդը, Թեմ. Խորհուրդը և Դիւանապետը ներկայ են լինում Թեմ. Ժողովին հարկաւոր անդեկութիւններ հաղորդելու համար:

29. — Թեմական Ժողովների պատուաւոր նախագահն է Թեմակալ Առաջնորդը, կամ Փոխանորդը, իսկ Ժողովի նիստերը կառավարում է առաջին Ատենապետ. որին Ժողովը ընտրում է իւր անդամներից իւրաքանչիւր նրատաշրջանի համար:

30. — Թեմակալ Առաջնորդին հրաժարեցնելու և այս հիմնական կանոնադրութիւնը փոփոխելու և լրացնելու հարցերը վճռում են բոլոր սրատգամաւորների ձայնից երկու երրորդ բազմութեամբ:

31. — Թեմական Ժողովն իւր միջից ընտրում է մի առնադպիր որ կազմում է Ժողովի նիստերի տրձանագրութիւնը:

Ծանօթ. — Ժողովի արձանագրութիւնները վաւերական են, երբ վաւերացրուած են ներկայ եղող պատգամաւորների մեծամասնութեան ստորագրութեամբ. իսկ 30-րդ յօդուածում նախատեսուած դէպքերում, պատգամաւորների $\frac{2}{3}$ մասի ստորագրութեամբ:

32. — Թեմական Ժողովի իրաւունքներ.

ա.) — Թեմական Ժողովն իրաւունք ունի սահմանելու և հրատարակելու իր շրջանի բոլոր գործերի և եկեղեցական համայնական հիմնարկութիւնների և հաստատութիւնների համար պարտադիր կանոնադրութիւններ, ղեկավարուելով Հայոց կանոնական իրաւունքով և այս հիմնական կանոնադրութեան սկզբունքով, նախապէս ներկայացնելով իւրաքանչիւր կանոնադրութիւնը Ն. Վ. Ամենայն Հայոց Աթոռիկոսին ի հաստատութիւն:

բ.) — Թեմական Ժողովը վերին և ընդհանուր հսկողութեան և հաշուառութեան իրաւունք ունի Թեմի բոլոր եկեղեցական-համայնական գործերում:

գ.) — Թեմական Ժողովը սրատգամաւորներ է ընտրում Թեմի կողմից Հայաստանեայց Եկեղեցու Համագումար Ծայրագոյն Ժողովին և այլ եկեղեցական համայնական ընդհանուր գործառնութիւններին մասնակցելու համար:

դ.) — Ընտրում և հրաժարեցնում է Թեմակալ Առաջնորդին Ն. Վ. Ամենայն Հայոց Աթոռ-

ղիկոսի հաստատութեամբ (յօդ. 28, ծանօթ բ.):

ե.) — Որոշում է իւրաքանչիւր քառամեակի համար, թեմակալ Առաջնորդի և այլ սլաշտօնեաների ուժիկը:

զ.) — Քննում և որոշում է նոր եկեղեցիներ հիմնելու խնդիրը:

է.) — Ընտրում և հրաժարեցնում է սլաշտօնից թեմ. Խորհրդականներին, փոխ-խորհրդականներին և վերաստուգող լանձնաժողովի անդամներին:

ը.) — Քննում է թեմակալ Առաջնորդի դէմ ծագած բողոքներն և ներկայացնում է ն. վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Քննում և վճռում է թեմական Խորհրդի դէմ ծագած բողոքները:

թ.) — Քննում և հաստատում է առաջիկայ երկամեակի համար թեմական Խորհրդի կազմած թեմական ընդհանուր նախահաշիւը:

ժ.) — Քննում և հաստատում է թեմական Խորհրդի անցած երկամեակի հաշիւը, նախապէս լսելով վերաստուգող լանձնաժողովի գեկուցագիրը:

ժա.) — Զանազան խնդիրների ուսումնասիրութեան համար, ինչպէս և այլ լանձնարարութիւններ կատարելու՝ պէտք եղած դէպքում ընտրում է լանձնաժողովներ, իրաւունք ունենալով կարեւոր դէպքերում դրանց ձեռնհաս անդամներ ևս ընտրել:

33. — Թեմական ժողովի խորհրդածութեան և վճռահաստատութեան առաջարկելիք խնդիրներն լանձնում են թեմ. Առաջնորդին, որը թեմական ժողովի Ատենայեան և թեմական ժողովի ու թեմական Խորհրդի Ատենադպրի զործակցութեամբ դասաւորում է և օրակարգով ներկայացնում թեմ. ժողովին: Թեմ. ժողովը կարող է փոխել խնդիրների օրակարգում բռնած հերթը: Խնդիրները թեմակալ Առաջնորդին կարելի է ներկայացնել թեմ. ժողովի նստաշրջանի ամբողջ ընթացքում:

34. — Թեմական ժողովը՝ ն. վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ յարաբերութիւն է սլաշում թեմակալ Առաջնորդի կամ Փոխանորդի միջոցով՝ Առաջնորդի բացակայութեան դէպքում: Առաջնորդը կամ Փոխանորդը, սլարտաւոր է թեմական ժողովի որոշումները մի շարաթիւում ընթացքում ուղարկել ն. վ. Կեհայեանութեան՝ տեղեկացնելով այդ մասին թեմական ժողովի Ատենայեանին: Առաջնորդի այս կէտում զանցառու գտնուելու դէպքում, թեմական ժողովի Ատենայեան է կատարում նրա սլարտքը:

35. — Վերաստուգող լանձնաժողովը բաղկանում է երեք անդամից և երկու փոխ-անդամից և ընտրւում է թեմ. ժողովից երկու տարի ժամանակով:

36. — Վերաստուգող լանձնաժողովը գումարուելով սովորական երկամեակ թեմ. ժողովից առնուազն մի ամիս առաջ, քննում և ստուգում է թեմ. Խորհրդի գործունէութիւնն ու ընդհանուր հաշիւը և գեկուցագիր ներկայացնում թեմական ժողովին:

Բ. ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ.

37. — Հայաստանեայց Եկեղեցու կանոնների համաձայն թեմակալ Առաջնորդին անորոշ ժամանակով ընտրում է Թեմ. Ժողովը և առաջարկում Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատութիւն:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն հաստատում է ընտրւածին և միջնորդում Իրանի և Անգլիական Կառավարութիւնների առաջ՝ ճանաչել նրան Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Պարսկաստանում և Հնդկաստանում:

38. — Թեմ. Առաջնորդը միանձնաբար տնօրինում է թեմի զուտ կրօնական գործերը՝ իւր աստիճանին և պաշտօնին յատկացուած իրաւունքների սահմաններում և հսկում է Հայաստանեայց Եկեղեցու կանոնների ու ծէսերի անթերի կատարման և հոգևորականների ու բոլոր պաշտօնեաների հարազատ պաշտօնավարութեան վրայ:

39. — Թեմ. Առաջնորդը պարտաւոր է այցելել Պարսկաստանի թեմը առնւազը 4 ամիս մի անգամ և ի պահանջի հարկին նաև Հնդկաստան: Թեմ. Առաջնորդը առաձին ուշադրութիւն է դարձնում Ժողովրդի, հոգևորականութեան, եկեղեցիների, վանքերի, եկեղեցական համայնական, կրթական և բարեգործական բոլոր հաստատութիւնների վիճակի վրայ՝ անհրաժեշտ դէպքերում հարկաւոր կարևոր կարողութիւններ անելով, որոնց մասին հաղորդում է Թեմ. Խորհրդին:

40. — Թեմակալ Առաջնորդն ի պաշտօնէ նախագահում է Թեմ. Ժողովին և Թեմ. Խորհրդին, նշանակում և հրաժարեցնում է Փոխանորդին. Թեմակառ խորհրդի համաձայնութեամբ: Եթէ ունի եպիսկոպոսական աստիճան, ձեռնադրում է քահանայներ և այլ եկեղեցական սպասաւորներ Հայաստանեայց Եկեղեցու կանոնների համաձայն, իսկ կուսակրօնների ձեռնադրութեան համար Թեմ. Ժողովի հաւանութիւնը ստանալուց լեւոր, հարցնում է Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թոյլտւութիւնը:

41. — Թեմ. Առաջնորդը հանդիսանում է ներկայացուցիչ Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պարսից կառավարութեան և այլ պետութիւնների դիւանագիտական մարմինների առաջ:

42. — Թեմ. Առաջնորդը Հնդկաստան այցելելու համար հարցնում է Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թոյլտւութիւնը:

43. — Առաջնորդ. Փոխանորդը նշանակւում է հոգևորականներից: Առաջ. Փոխանորդը ի պաշտօնէ անդամակցում է Թեմ. Խորհրդին: Թեմ. Առաջնորդի բացակայութեան, տկարութեան, այլ և Առաջ. Աթոռի թափուր եղած ժամանակ, Փոխանորդն ունի առաջնորդական բոլոր վարչական իրաւունքները:

44. — Թեմակալ Առաջնորդը կամ Փոխանորդը ունենում է և մի Թեմ. Կրօնական Խորհուրդ, որ քուէից առաւելութեամբ ընտրւում է թեմի հոգևորականներից, կրօնական գործերը կառավարելու:

Գ. ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

5.— Պարսկա-Հնդկաստանի իւրաքանչիւր շրջանի Թեմական Խորհուրդը բաղկանում է 9 հոգուց՝ որից մէկը ի պաշտօնէ անդամ, որ է Թեմ. Առաջնորդը կամ Փոխանորդը և ութն խորհրդականներից, որոնց ընտրում են Թեմական Ժողովները չորս տարի ժամանակով:

Թեմ. Խորհրդականների կէսը իւրաքանչիւր երկու տարին լրանալուց յետոյ հերթով դուրս են գալիս:

Առաջնորդի և Փոխանորդի բացակայութեան ժամանակ, Ատենապետը նախագահում է հերթական նիստերին:

Մանօր. ա.— Այս կանոնադրութեան դործադրութեան առաջին երկու տարուց յետոյ Թեմ. Խորհրդականների կէսը դուրս է դնում յիշակով, իսկ այնուհետև հերթով:

բ.)— Թեմական Խորհուրդի կազմի և սրա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների մասին Թեմական Առաջնորդն իւրաքանչիւր անգամ ղեկուցանում է Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

16.— Թեմական Ժողովն ընտրում է Նոր-Ջուղայարնակ կամ Թէհրանաբնակ հոգևորականներից և աշխարհականներից նաև 4 Թեմ. Փոխ-Խորհրդականներ, որոնք փոխարինում են Թեմ. Խորհրդականներին նրանց երկարատեւ բացակայութեան կամ տկարութեան ժամանակ, իրենց ընտրութեան ձայնից առաւելութեան կարգով:

17.— Եթէ Թեմական Խորհրդական կամ փոխ-խորհրդական է ընտրւում Թեմ. Ժողովի անդամը, սա հրաժարւած է համարւում պատգամաւորի պաշտօնից Թեմ. Ժողովին նոյն նստաշրջանի համար:

18.— Բացի հերթական նիստերից, ոտ լինում են սահմանուած օրերը, կարող են հարկ եղած դէպքերում գումարուել Թեմ. Խորհրդի արտակարգ նիստեր Թեմ. Առաջնորդի, կամ Փոխանորդի, իսկ սրանց բացակայութեան դէպքում՝ Ատենապետի հրաւերով:

19.— Թեմ. Խորհրդի նիստերին նախագահում է Թեմ. Առաջնորդը, կամ Փոխանորդը. իսկ սրանց բացակայութեան կամ անկարողութեան դէպքում, — Խորհրդի Ատենապետը:

50.— Թեմական Խորհուրդը.

ա.)— Հսկում է Թեմի բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների և պաշտօնականների վարչական դործունէութեան վրայ:

բ.)— Կազմում է Թեմի եկեղեցական-համայնական հաստատութիւնների, կանոնադրութիւնների նախագծերը և առաջարկում է Թեմական Ժողովին ի հաւանութիւն:

գ.)— Քննում և որոշում է եկեղեցիներ, եկեղեցական-համայնական կրթական և բարեգործական հաստատութիւններ հիմնելու խնդիրները:

դ.)— Նոր հիմնուելիք կրթական և բարեգործական եկեղեցական-համայնական հաստատութիւնների համար կազմում է և ժամանակաւորապէս հաստատում կանոնադրութիւններ, որպիսիք պարտաւորապէս ներկայացնում է առաջիկայ Թեմ. Ժողովի հաւանութեան:

ե.)— Հրահանգներ է տալիս Թեմի ստորակարգ եկեղեցական համայնական հաստատութիւններին և պաշտօնականներին, ղեկավարուելով այս հիմնական կանոնադրութեամբ, ինչպէս և ապագայում Թեմ. Ժողովի կողմից մշակւած և վիճ. Կաթողիկոսից հաստատուած կանոնադրութիւններով և կարգադրութիւններով:

Մանօր. — Թեմական Խորհրդի յօրինած այս հրահանգի՝ ինչպէս նախորդ (դ.) կէտում յիշուած ժամանակաւոր կանոնա-

դրութիւնների օրինակները վաւերացուած են թեմակալ Առաջնորդի կնքով և ստորագրութեամբ:

զ.) — Ժողովում, պահում և շահեցնում է բոլոր թեմապատկան հասոյթներն ու արդիւնքները, կատարում է ընդհանուր ծախքեր և առհասարակ վերջնական վճիռներ է կայացնում թեմի ընդհանուր տնտեսական հարցերի մասին՝ ղեկավարուելով նախահաշուով: Թոյլտուութիւն է տալիս 50 թումանից աւելի ծախքեր անել վանքերի և եկեղեցիների վրայ:

է.) — Թոյլտուութիւն և մատեաններ է տալիս հանգանակութիւններ անելու Պարսկա-Հնդկաստանի թեմում, ինչպէս և թեմից դուրսը:

ը.) — Նշանակում է թեմական տեսուչ՝ թեմի բոլոր համայնական-կրթական հաստատութիւնների վրայ հսկելու համար:

թ.) — Հարկաւոր դէպքում նշանակում է վերաքննիչներ՝ եկեղեցական-համայնական հաստատութիւնների գործերն ու հաշիւները ստուգելու համար:

ժ.) — Հաստատում է պաշտօնում և հրաժարեցնում է դրարոցների հոգարարձուներին, գործակալական խորհրդականներին, երեցփոխներին, ծխական խորհրդականներին, հաստատում և արձակում է ուսուցիչներին հոգարարձուների առաջարկութեամբ:

ժա.) — Մանրամասն ուսումնասիրութիւն պահանջող հարցեր քննելու համար բնորում է յանձնաժողովներ, որոնք հարցը ուսումնասիրելուց յետոյ, ղեկուղադիր են ներկայացնում թեմ. Խորհրդին:

ժբ.) — Ամեն տարի բաժանում է գործակալական և ծխական խորհուրդներին հարկաւոր նոր մատեաններ և յետ ստանում հները:

ժգ.) — Որոշում է մանրամասն հրահանգով թեմական գործակալական և ծխական խորհուրդների կողմից տրուող հաստատող և վաւերացող վաւերաթղթերի՝ համար վճարելիք թղթատուրքի քանակը և դանձման ձևը և առաջարկում թեմական Ժողովին ի հաստատութիւն:

ժդ.) — Տարին մի անգամ ղեկուղադիր է մատուցանում Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին թեմի կադութեան մասին: Տարին մի անգամ թեմ. Ժողովին մանրամասն հաշիւ է ներկայացնում թեմի եկեղեցական համայնական գործերի, գոյքերի և հիմնարկութիւնների վիճակի ու կառավարութեան մասին, այլ և բոլոր հաստատութիւնների և պաշտօնեաների գործունէութեան մասին: Թեմ. Խորհուրդը պարտաւոր է թեմ. Ժողովի սովորական նիստից առնուազն մի ամիս առաջ պատրաստ ունենալ այս ընդհանուր հաշիւը, այլ և իւր գործունէութեան վերաբերեալ ամեն տեսակ վաւերաթղթեր՝ բոլոր պահանջման վերաստուգող յանձնաժողովին յանձնելու համար:

ժե.) — Իբրեւ նստարական հաստատութիւն, հաստատում է ազգայինների կտակագրերը, մուրհակները, կապալաթղթերը և այլ այսպիսի վաստաթղթեր և վաւերացնում է իրեն ղիմողների ստորագրութիւնը:

ժզ.) — Իբրեւ առաջին աստեան, քննում է պատկալուծութեան վերաբերեալ գործերն ու առաջարկում է Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին խորհրդանութիւն: Քննում և վճռում է թեմի բոլոր եկեղեցական-ազգային հաստատութիւնների կողմից և սրանց դէմ ստացուած բողոքները, այլ և հոգևորականների և Ժողովրդի մէջ ծագած տարաձայնութիւնները:

ժէ.) — Իբրեւ երկրորդ աստեան, քննում և վճռում է այն բոլոր վէճերը, խնդիրներն ու դանդաճները՝ (ամուսնական, ժառանգական կայն) որոնք սկսուել են գործակալական խորհրդում, այլ և վճռում է խնամակալութեան վերաբերեալ բոլոր հարցերը:

51. — Թեմական Սնդուկի անմիջական հսկողութիւնն ու բանալին յանձնուած է Թեմ. Խորհրդի Քանձապահին, որին Թեմ. Խորհուրդն ընտրում է իւր միջից չորս

տարի ժամանակով փոխադարձ երաշխաւորութեամբ:

Ծանօթ.— Թեմ. Խորհուրդը պարտաւոր է իւրաքանչիւր ամիս ստուգել Թեմ. Մնղուկը:

52.— Թեմասպառական գումարներից մինչև 250 թուման պահւում է սնդուկում, իսկ աւելի գումարները ապահով գրաւականով շահեցնում են Թեմ. Խորհրդի տնունով, նոյն Խորհրդի օրինաւոր վճռի համաձայն և բոլոր տնդամների ընդհանուր պատասխանատուութեամբ:

53.— Թեմ, Խորհուրդը պարտաւոր է ունենալ:

ա.)— Ամբողջ Թեմի բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, այն է, չէն ու աւերակ վանքերի և եկեղեցիների, դպրոցների, դրաղարանների և առհասարակ բոլոր կրօնական, կրթական և բարեգործական հաստատութիւնների և դրանց պատկանող կամ յատկացուած անշարժ գոյքերի տպագրած մանրամասն ցուցակը:

բ.)— Ամբողջ Թեմի հայ սուղարնակութեան, աճման, մահացութեան և ամուսնութիւնների վիճակագրական աղիւսակը՝ Պորժակալական Խորհուրդների չափաբերականներից քաղուած տեղեկութիւնների համաձայն:

գ.)— Մատենաներ Թեմի բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւններին պատկանող կամ յատկացուած շարժական գոյքերի, այն է դրամազույնների, անօթեղէնների, զարդերի, գրքերի, կահ-կարասիքի և այլն՝ մանրամասն ցուցակագրութեամբ:

54.— Թեմ. Առաջնորդն ու Խորհուրդը ունեն մի ընդհանուր դիւանատուն, որի համար Թեմ. Խորհուրդը գրադիրներ և դիւանապետ է վարձում թեմ. Առաջնորդի հաստատութեամբ: Դիւանապետը համարւում է գրադիրների և դիւանատան պատասխանատուն:

55.— Դիւանապետը պարտաւոր է պահել մատենաներ Թեմ. Խորհրդի արձանագրութիւնների և գործադարութեան բոլոր բաժինների համար և հսկել դիւանատան բոլոր թղթերի անկորուստ և կանոնաւոր պահպանութեան վրայ:

56.— Թեմական Խորհրդի բոլոր սաշտօնական թղթերը, այն է գրագրութիւնները զանազան տնձերի և հաստատութիւնների հետ, արձակած վճիռները, խնդրատուներին տրւած վկայագրերը և Խորհրդից տրւած որոշումների, վճիռների պատճէնները և այլն, պէտք է կրեն թեմ. Առաջնորդի, կամ Փսխանորդի և Դիւանապետի ստորագրութիւնները և գրոշմուած լինին Առաջնորդական կնքով:

57.— Թեմական Խորհուրդը գործերին զիւրութիւն և տւելի կանոնաւոր ընթացք տալու համար, իր միջից (և կամ դրսից) ընտրում է նաեւ երեք առաձին առանձին Խորհուրդներ, Արթական, Տնտեսական և Իրաւարարական:

ա.)— Կրթական Խորհուրդը հսկում է դիւզական դպրոցների վրայ վարձելով ուսուցիչներ և հոգալով նրանց բիւզճէի մասին: Կազմում է չրջանի բոլոր դպրոցների համար ծրագիրներ և ներկայացնում Թեմական Խորհրդին ի վաւերացում:

բ.)— Տնտեսական Խորհուրդը քննում է չրջանի բոլոր Ազգային, Կրօնական, Կրթական, Բարեգործական հաստատութիւնների տարեկան հաշիւները և ներկայացնում Թեմական Խորհրդին, վաւերացնելու և տպագրելու:

գ.)— Իրաւարարական Խորհուրդը քննում է Թեմ. Խորհրդին գիւմուղների բոլոր անհատական խնդիրներն ու դանդաշները և իր որոշումները ներկայացնում Թեմ. Խորհրդին ի գործադրութիւն:

Գ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

58. — Պարսկա-Հնդկաստանի թեմի իւրաքանչիւր շրջանը ունի 10 գործակալութիւն և եկեղեցականութիւն:

59. — Գաւառներում, իւրաքանչիւր 100 տուն տալիս է մի ներկայացուցիչ, որոնցից և կազմւում է Գործակալական Խորհուրդ:

60. — Գործակալը որ գիւղից որ լինի, այդ գիւղը համարւում է գաւառի կենդրոնը:

61. — Գործակալական Խորհուրդը մերձաւոր հսկողութիւն ունի.

ա.) — Գործակալութեան բոլոր եկեղեցական համայնական հաստատութիւնների և պաշտօնեաների վարչական գործունէութեան վրայ:

բ.) — Պարտաւոր է գործակալութեան բոլոր եկեղեցական համայնական հաստատութիւնների վիճակի և կառավարութեան, ինչպէս նաև պաշտօնեաների վարչական գործունէութեան մասին տարին մի անգամ տեղեկագիր ուղարկել թեմ. Խորհրդին:

գ.) — Ժողովում է և երեք ամիսը մի անգամ օրինաւոր ցուցակագրութեամբ ուղարկում է թեմական Խորհրդին գործակալութեան բոլոր թեմատական հասոյթներն ու արդիւնքները:

դ.) — Ամենայն տարուայ սկզբին գործակալութեան բոլոր ծխական խորհրդներին բաժանում է թեմական Խորհրդից ստացուած նոր մատեաններ՝ քահանաներին և երեցօրիններին յանձնելու համար և հնէրը վերցնելով ուղարկում է թեմական Խորհրդին՝ պահելով պատճէնները:

ե.) — Հաստատում և վաւերացնում է ազգայինների փաստաթղթերը, և ստորագրութիւնները և տալիս է չափաբերական քաղուածքներ:

զ.) — Հաստատում է խնամակալներ մուտք ազգայիններից յետոյ մնացած դոքերի և սրբերի վրայ, հրաժարեցնում է և դաժ խնամակալներին, թոյլ է տալիս խնամակալներին ծախքեր անել սրբերի և դոքերի վրայ մինչև 50 թուման, աւելի մեծ ծախքերի, ինչպէս նաև որբապառական դոքերի դրաւ դնելու և ծախելու համար՝ զիմելով թեմական Խորհրդին:

է.) — Իրրեւ առաջին ատեան՝ քննում է գործակալութեան մէջ ապրող հայերի ամուսնական խնդիրները, շրջառութեան կատարմանի դէպքերում զիմելով թեմակալ Առաջնորդին, և իրեն զիմողների բոլոր կալուածական ժառանգական և այլ վէճերն ու խնդիրներն:

62. — Գործակալական Խորհուրդը պարտաւոր է ունենալ մատենաներ՝ գործակալական բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, գրանց պատկանող կամ յատկացուած անշարժ և շարժական գույքերի, այլև բոլոր պաշտօնեաների մանրամասն ցուցակագրութիւնը և ծխական խորհուրդների չափաբերական մատենաների պատճէնները:

63. — Գործակալական Խորհուրդը իւր միջից փոխադարձ երաշխաւորութեամբ ընտրում է մի գանձապահ երկու տարի ժամանակով, որին յանձնում է իր գումարկի անմիջական հսկողութիւնն ու բանալին:

Ծանօթ. — Գործակալական Խորհուրդը պարտաւոր է ամեն ամիս կատարել իւր դրամարկի ստուգութիւնը:

64. — Գործակալական Խորհրդի բոլոր պաշտօնական թըղթերը, որք է կրեն նախագահի և գործակալի ստորագրութիւնները և գրողմուտք լինին գործակալական խորհրդի կնիքով, որը ստանաւ է թեմական Խորհրդից:



12

1. The first of the following is a list of the names of the persons who have been admitted to the office of the Secretary of the Board of Education since the 1st of January 1870. The names are given in alphabetical order of their surnames. The names of the persons who have been admitted to the office of the Secretary of the Board of Education since the 1st of January 1870 are given in alphabetical order of their surnames.

TABLE


1. The first of the following is a list of the names of the persons who have been admitted to the office of the Secretary of the Board of Education since the 1st of January 1870. The names are given in alphabetical order of their surnames. The names of the persons who have been admitted to the office of the Secretary of the Board of Education since the 1st of January 1870 are given in alphabetical order of their surnames.

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	96	97	98	99	100
---	---	---	---	---	---	---	---	---	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	-----



3409

ՀՀ Ազգային գրադարան



NL0030471

